

« 18 » սեպտեմբեր 2026թ. No 5374 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի կետ 1-ի, ԵՏՀ խորհրդի 2016 թվականի նոյեմբերի 3-ի թիվ 78-որոշման կետ 170-ի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման N 01/4639-26 առ 01.09.2026թ. փորձագիտական եզրակացությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Եվրասիական տնտեսական միության գրանցման (միայն Հայաստանում կիրառման համար) ընթացակարգով գրանցել երաշխավորված 3 դեղը՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետին՝

1) Սույն հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության և Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետին:

3. «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝

1) Ապահովել սույն հրամանով գրանցված դեղի վերաբերյալ տվյալների հրապարակումը գրանցամատյանում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-

ի 32-րդ և ԵՏՀ խորհրդի 2016 թվականի նոյեմբերի 3-ի թիվ 78-որոշման 180-րդ կետի պահանջների:

2)Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել գրանցված դեղի վերաբերյալ տվյալների ընդգրկումը գրանցամատյանում՝ լիազոր մարմնի հաստատված կարգով:

4. Ուժը կորցրած ճանաչել նախկինում գրանցված գրանցված «Վուրդոն-Նեո» N 23125, «ՄԱԳՆԵԶԻՈՒՄԻ ՍՈՒԼՖԱՏ» N 22610, «Զիթրոցին» N 22710 դեղերի գրանցման հավաստագրերը համաձայն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի նոյեմբերի 3-ի թիվ 78 որոշման 180-րդ կետի:

5.Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետին՝

1) ապահովել սույն հրամանի տեղադրումը առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

6. Դեղի գրանցման ժամկետը սահմանվում է համաձայն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի նոյեմբերի 3-ի թիվ 78 որոշման 180-րդ կետի, հաշվարկը սկսվում է սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրվանից:

Ա.ԱՎԱՆԵՍՅԱՆ

 Recoverable Signature

X 

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

ԵՎՐԱՄԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ (ՄԻԱՅՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ) ԳՐԱՆՑՎԱԾ ԴԵՂԵՐԻ ՑԱՆԿ

ՀՀ	Առևտրային անվանումը	Ակտիվ բաղադրատարրի համընդհանուր անվանումը	Դեղաձևը	Դեղաչափը և Փաթեթավորումը, թողարկման ձևը	Դեղի արտադրական գործընթացում ներգրավված բոլոր արտադրողները (անվանում, գտնվելու վայր)	Երկիր	Դեղի պետական գրանցման հավաստագրի իրավատերը (անվանում, գտնվելու վայր)	Երկիր	Բաց թողնման կարգավիճակը	Եզրակացության համար և ամսաթիվ
1	Վուրդոն-Նեո	դիկլոֆենակ (դիկլոֆենակ նատրիում)	դեղահատեր աղեղյծ	50մգ (20/2x10) լիստերում	Հելվի Ս.Ա., Պեդինի Իոանինոն, Իոանինա, 45500	Հունաստան	ԱՌԳՈ-ՖԱՐՄ ՍՊԸ, 13/9 Մունդուլյան փ., 0012 Երևան	Հայաստանի Հանրապետություն	Դ	24466 (042683) 31.08.2026
2	ՄԱԳՆԵՉԻՈՒՄԻ ՍՈՒԼՖԱՍ	մագնեզիումի սուլֆատ	դեղափոշի ներքին ընդունման լուծույթի	25գ (10) փաթեթիկներ 25գ	ԷՄԿՈ-ՖԱՐՄ ՍՊԸ, Նոր Նորք 5-րդ գանգված, Սիկրյան 13, Երևան 0079	Հայաստանի Հանրապետություն	ԷՄԿՈ-ՖԱՐՄ ՍՊԸ, Նոր Նորք 5-րդ գանգված, Սիկրյան 13, Երևան 0079	Հայաստանի Հանրապետություն	ԱԴ	24467 (044075) 31.08.2026
3	Զիթրոցին	ազիթրոմիցին (ազիթրոմիցինի դիհիդրատ)	դեղահատեր թաղանթապատ	500մգ (3/1x3) լիստերում	ԷՅԼԱԲ ՖԱՐՄԱՍՅՈՒԹԻՔԱԼ ՍՊԸ, Քոչինյան 13/16, Երևան- երկրորդային փաթեթավորող, որակի և բաց թողնման հսկող, Մենտուրիոն Լաբորատորիես Պվտ. Լտդ, Պ-2 Սավլի Բիո-Թեք Պարկ, Առ Մանջուսար, Տալ Սավլի, Վարդուարա-390016, Հնդկաստան- բայր արտադրող, առաջնային փաթեթավորող	Հայաստանի Հանրապետություն	ԷՅԼԱԲ ՖԱՐՄԱՍՅՈՒԹԻՔԱԼ ՍՊԸ, Քոչինյան 13/16, Երևան	Հայաստանի Հանրապետություն	Դ	24468 (044872) 31.08.2026